



ԲԱՆԴԱՅԻՆ ԾԵՍՈՒՆԻՆԵՐ

Ղիհնա, 30 Յուլիս, 1893:

Եւրոպոյ մտադրութիւնը գրաւած էին այս ամսոյ մէջ գերմանական խորհրդանոցի ընտրութիւնը: Յայտնի է որ նոր հսկայ գինւորական օրէնքը շնորհունեցաւ նախնիքաց խորհրդանոցն, որուն հետեւութեամբ լուծեց կայսրը գխորհրդանոցն եւ նոր ընտրութիւնը սահմանեց ամսոյս 15ին: Սոյն օրն եղան ընտրութիւնը, որ մտաց մեծ խառնակութեան նշան կը մարմարուին, վասնզի ընտրութեանց գրեթէ կէսը չկրցաւ որոշուիլ, այլ երկրորդ ընտրութեան մնաց: Այժմ՝ որ ընտրութիւնը բոլորովին լմացած է, տեսուեցաւ որ նոր խորհրդանոցին մէջ, որ 12էն աւելի կողմակցութիւնը կան այժմ, հագիւ մեծ մզամեջ կարելի պիտի ըլլայ տէրութեան թերեւս 5—10 ծայնի առաւելութիւն մ'ունենալ հակառակորդաց վրայ, որ տարակուսական յաջողութիւն մըն է: Կաթողիկեայ կողմակցութիւնը մնաց նոյն զօրութեան մէջ, իսկ Ազատամիտ կոչուած կողմակցութիւնը շատ տկարացաւ, գորացած կ'երեւան Ընկերավարականը եւ Հակասեմականը:

Ըստնորագոյն լոյց Գաղղիոյ ալ խորհրդանոցի ընտրութիւնը պիտի ըլլան Սեպտեմբերին, որ պիտի ցուցնեն թէ ինչ ազդեցութիւն ըրած է Փանամայի խնդիրը: Այս օրերս կընուեցաւ Գաղղիոյ եւ Ռուսիոյ մէջ շառեւարական հարազգի մը, մինչդեռ Գերմանիոյ եւ Ռուսիոյ մէջ այս նիւթոյ մասին քանակցութիւնը երկար աւտնէ կը շարունակուին առանց որոշ արդիւնք մ'ունենալու: Ռուսիա նոր մարսացանկ մը պիտի հրատարակէ, որ այժմու մարտերը պիտի պահէ այն ազգաց համար որ իրեն ալ շնորհում կ'ընեն, իսկ այլոց համար՝ քարծրագոյն սակեր պիտի պարունակէ:

Իտալիոյ մէջ Պաշտօնարանը հրատարական տուաւ, ըսյց թագաւորը դարձեալ

յառաջուն Պաշտօնէից Գահերիցուն յանձնեց կապմը Պաշտօնարանը, որուն մէջ մտան ինչ Պաշտօնեայք մէկ երկու բացառութեամբ: — Պաշտօնարանի փոփոխութիւն եղաւ նաեւ ի Սերպիա:

Ժովպիյն մեծ արկած մը վերջին օրերն պատահեցու Տրիպոլսոյ ծովագերըն անգղիական Միջերկրական նաւատորմիին: Փորձի ժամանակ «Վիտորիա», հսկայ նաւն հարուած մ'ընդունելով ուսրիշ նաւէ մը, քիչ ժամանակէն ընկղմեցաւ իբր 300 հոգի ի միասին տանելով: Բոլոր եւրոպական լրագրաց մէջ այս առթիւ գինւորական նաւաշինութեան նկատմամբ խորհրդածութիւնը կ'ըլլան: Հնդկաստանի մէջ զրամական մեծ փոփոխութիւն մ'եղաւ՝ ազատ արժաթահատութիւնը գրեթէ ջնջուելով եւ միայն կարեւոր դիպաց մէջ ներելով: Դրամական համաժողով մը պիտի գումարուի դարձեալ ի Պրիւսէլ, որուն համար Միացեալ Նահանգք խնդրած են Բեղգիայէ որ ձեռնակու ըլլայ:



ԲՈՎԱՆԻԿԱՆ ԻՏԻՒՆ

ՌԻՍՈՒԲՆԱԿՆ

- ՄՆԱՅԻՆԱԳՐԱԿԱՆ — Վարդապետութիւնը առաքելաց անվանքական կանոնաց մատանը, 1893:
 ԲԺՇԿԱԿԱՆ — Հայ քոչկական ձեռագիրք, 197:
 ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ — Պատասխան Ռ. Յ. Պէլլուքեանի ընտրութեան Մ. Խորենացոյ մասին, 201:
 — Զմեռնիոյ հայ ընթերցատունը, 206:
 ԳՐԱԿԱՆ — Զմեռնի գլակ, 209:
 ԷԺՅՈՒՄԱՆԱԿԱՆ — Սեմական փոխառեալ բառեր ինչ հայերէնի, 213:
 ՌԻԶԳՐԱԿԱՆ — Սեւ ծովու ոռոսկան եզերքը, 215:
 ՄԱԳՆԻԶՐԱԿԱՆ — Հայ գիւղական տունը, (Պատկերաւ), 218:
 ԲՆԱՅՏՏՅՐԱԿԱՆ — Հրածեշտ, 222: — Ծրկիւ վարը, 222:
 ԱՐԻՈՒՄԳԻՏԱԿԱՆ — Ժամանցը, 222:
 ԲԱՆԴԱՅԻՆ ԾԵՍՈՒՆԻՆԵՐ, 224:



ՀՐԱՏԱՐԱՐԻԶ ԵՒ ՊԱՏԱՐԱՆԱՏՈՒ ԽՍՐԱՎԻՐ

Է. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

ՎԻՆԵՆԱ. ՄԻԻԲԱՐԵԱՆ ԳԱՐԱՆ